



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,  
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«15» փետրվարի 2024 թվականի N 10-Ա

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**.

- Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի: Համայնքի ավագանիներ.

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Գրիգորյան Արմեն  
Աբրահամյան Հրահատ  
Ասրյան Վարսիկ  
Բաղդասարյան Անուշ  
Գազինյան Ատոմ  
Գրիգորյան Արմեն Փ.  
Իսախրյան Անուշ  
Մարտիրոսյան Հմայակ  
Դավթյան Արմեն  
Նազարյան Սյուզաննա  
Հակոբյան Արծրուն  
Նալբանդյան Աղունիկ  
Պապյան Լևոն  
Պապյան Արթուր  
Հակոբյան Վանո  
Մարտիրոսյան Մարտուն  
Տոնոյան Անդրանիկ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

15.02.2024թ.

հ. Ստեփանավան

1. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Է. ՈՒՎԱԶՅԱՆ**

4. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Հ. ՄԵՍՐՈՊՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՆԻՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԶԵՎԱՆ ԿՐԻԿՈՐԻ ԶԵԼՈՅԱՆՑԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ս. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՊԱՊՅԱՆ**

6. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,  
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» փետրվարի 2024 թվականի N 11-Ա

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ  
(ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 4.1 կետով, 35-րդ հոդվածի 3.1 կետով և 82.1 հոդվածով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**.

- Հաստատել Ստեփանավան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն հավելված 1-ի և 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի համապատասխանեցումը Կայուն զարգացման նպատակների ցուցանիշներին՝ համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանիներ.

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Գրիգորյան Արմեն

Աբրահամյան Հրահատ

Ասրյան Վարսիկ

Բաղդասարյան Անուշ

Գագինյան Ատոմ

Գրիգորյան Արմեն Փ.

Իսախիրյան Անուշ

Մարտիրոսյան Հմայակ

Դավթյան Արմեն

Նազարյան Սյուզաննա

Հակոբյան Արծրուն

Նալբանդյան Աղունիկ

Պապյան Լևոն

Պապյան Արթուր

Հակոբյան Վանո

Մարտիրոսյան Մարտուն

Տոնոյան Անդրանիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2024 թվականի  
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



**Կազմել է՝ համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյան**

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 15.02.2024թ. թիվ 11-Ա որոշմամբ**

**Ստեփանավան 2024 թ.**

**Բովանդակություն**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՄԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....4

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ և ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ (ՈԼՈՐՏՆԵՐԻ)  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ .....9

3. ՀԱՄԱՅՆՔԻ 2024 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ  
ՈԼՈՐՏՆԵՐԻ)..... 13

4.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024 Թ. ԾՐԱԳԻՐԸ.....66

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....71

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ .....75

## Ներածություն

Ստեփանավան համայնքի 2024թ. տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ) սահմանված տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը: ՏԱՊ-ը հիմնված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և Ստեփանավան համայնքի կողմից 2022 թվականին մշակված ռազմավարության հիման վրա: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև 10 տարվա ռազմավարական պլանը՝ ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: ՏԱՊ-ում նկարագրված պարտադիր ոլորտներում նշված նախագծերը բխում են նաև ռազմավարությունից: Կապը պարտադիր ոլորտների հետ տես **Աղյուսակ 3-ում**: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

**ՏԱՊ-ը** բաղկացած է **6 բաժիններից, 1-ին բաժնում** ներկայացված է՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** ներկայացված է՝ Համայնքի պարտադիր խնդիրների, համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների (ոլորտների) և 2022-2032թթ.ռազմավարական ուղղությունների համապատասխանությունը (**Աղյուսակ 3**):

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** բերված են համայնքի 2024թ. համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերի ցանկը (**Աղյուսակ 4**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերի ցանկը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2024թ. ծրագիրը (**Աղյուսակ 7**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 8**):

**ՏԱՊ-ի 6-րդ բաժնում** ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ(**Աղյուսակ 9**):

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

### Համայնքի տեսլականը՝

Ստեփանավան խոշորացված համայնքը աշխարհին կապված, ագրոտնտեսապես զարգացած, ժամանցով հագեցած, մշակութային և նորարարական վերելքներին պատրաստ, մրցունակ տեղական ինքնակառավարում ունեցող, բարեկարգ, մաքուր և գեղատեսիլ համայնք է՝ հագեցած ենթակառուցվածքներով, հանգստյան տներով, առողջարաններով, որտեղ կան բոլոր հնարավոր միջոցները համայնքը դարձնելու գրավիչ զբոսաշրջության համար, ինչպես նաև՝ հարմարավետ ու ապահով թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության համար: Համայնքի բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն:

### Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	14,05	14,05
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	30.8	32.3
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	18592	19295
Համայնքում տվյալ տարվա ընթացքում արտաբյուջետային ներդրումների ծավալը (հազ. դրամ)	-	-
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	0	0
Այլ ցուցանիշ	-	-

### Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			



Տեղական ինքնակառավարման գործունեությունը համահունչ դարձնել արդի պահանջներին, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ և թափանցիկ համակարգ:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից (հարցումների հիման վրա), %	70	80
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, %	30.8	32.3
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ուժերի պատրաստվածության մակարդակը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքացիական պաշտպանության գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից (հարցումների հիման վրա), %	75	85
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման մակարդակը և իրականացնել արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ:	Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստակալության մակարդակը, %	60	70
	Տարերային աղետների հնարավոր վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման ոլորտում համայնքի բնակիչների գիտելիքների, ունակությունների և հմտությունների ավելացում (հարցումների հիման վրա)	բավարար	լավ
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Ապահովել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից (հարցումների հիման վրա), %	54	65

<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
Բարձրացնել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը:	Համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրված հողերի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	33	45
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
Ապահովել տրանսպորտի ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցումը:	Բնակիչների բավարարվածությունը համայնքում տրանսպորտային ծառայությունից	բավարար	լավ
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>			
Ապահովել առևտրային ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցումը:	Բնակիչների բավարարվածությունը համայնքում առևտրային ծառայությունից	բավարար	լավ
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
Ապահովել համայնքում արդյունավետ կրթական ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	3	6
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	18	20
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը և ապահովել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	65	75
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռը դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	36	40
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
Ընդառաջել բժշկական կենտրոններին՝	Համայնքում ներդրված է	15	25

առաջավոր մասնագետների փորձը համայնքում ներդնելու գործում, բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցելու ասպարեզում:	առաջավոր մասնագետների փորձ բժշկական ոլորտում, %		
	Բժշկական ոլորտում բնակչությանը մատուցվող որակյալ ծառայությունների մատչելիությունը, %	13	25
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
Ապահովել համայնքի բնակչությանը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը:	Մարզական խմբակներում ընդգրկված դպրոցական երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	8	15
	Մատուցվող մարզական ծառայությունների մատչելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	15	25
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
Ըստ սահմանված օրինակարգության և չափորոշային նորմերին համապատասխան ապահովել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված գործող ծրագրերի շարունակականությունը և բարձրացնել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և միջազգային փորձի ներդնում և վիճակագրական տվյալների հստակեցում:	Սոցիալական ծրագրի շահառուների քանակը	180	150
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը	75	85
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
Ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ	Առկա հողմասերի մշակման և միավորման մակարդակի բարձրացումը, ցանքաշրջանառության	35	45

	ստեղծումը %		
<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա</b>			
Ստեղծել անասնաբուժության և բուսասանիտարիայի զարգացման համար նպաստավոր պայմաններ	Անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների թիվը %	60	65
	Անասնաբուժական կետերի քանակը	1	2
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	100	100
	Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ, %	100	100
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
Տուրիստական կառույցների հետ ակտիվ համագործակցության ձևավորման միջոցով նպաստել զբոսաշրջության զարգացմանը համայնքը դարձնելով առավել հայտնի և ճանաչված:	Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ, %	8	20
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
Ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը և ՏԻՄ-երի աշխատանքների թափանցիկության մակարդակի բարձրացումը:	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	5	15

**2. Համայնքի պարտադիր խնդիրների և համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների (ուլորտների) համապատասխանությունը երկարաժամկետ ռազմավարությանը**

**Աղյուսակ.3 Համայնքի պարտադիր խնդիրների, համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների (ուլորտների) և 2022-2032թթ.ռազմավարական ուղղությունների համապատասխանությունը**

Հհ	Պարտադիր խնդիրը	Համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառը	2022-2032թթ.Ռազմավարական ուղղությունները
1	Համայնքի կայուն զարգացումը	Ընդհանուր	ՌՌԻ 4.Հագեցած, մրցունակ, տեղական ինքնակառավարում ունեցող համայնք
2	Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը	Ընդհանուր	ՌՌԻ 2.Աշխատող, ագրոտնտեսապես զարգացած համայնք
3	Համայնքի գույքի կառավարումը	Ընդհանուր	ՌՌԻ 5.Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
4	Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	ՌՌԻ 3. Կրթված, մշակութահեն, նորարարական և ժամանցով հագեցած համայնք
5	Համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	ՌՌԻ 3. Կրթված, մշակութահեն, նորարարական և ժամանցով հագեցած համայնք
6	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը	Սոցիալական պաշտպանություն	ՌՌԻ 6. Առողջ և սպորտային համայնք

7	Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	ՌՌԻ 6. Առողջ և սպորտային համայնք
8	Համայնքում բնակարանային շինարարության խթանումը	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	ՌՌԻ 5. Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
9	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարա-կան մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	ՌՌԻ 5. Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
10	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը	Տրանսպորտ	ՌՌԻ 5. Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք

11	Պետության պաշտպանության իրականացման աջակցումը	Պաշտպանության կազմակերպում	ՌՌԻ 5.Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
12	Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում	ՌՌԻ 5.Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
13	Համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	Գյուղատնտեսություն, Անասնաբուծություն և բուսասանիտարիա	ՌՌԻ 2.Աշխատող, ագրոտնտեսապես զարգացած համայնք
14	Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը	Շրջակա միջավայրի պահպանություն, Անասնաբուծություն և բուսասանիտարիա	ՌՌԻ 5.Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք
15	Համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը	Զբոսաշրջություն	ՌՌԻ 1.Աշխարհին կապված զբոսաշրջային և համագործակցող համայնք
16	Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	ՌՌԻ 3. Կրթված, մշակութա հեն, նորարարական և ժամանցով հագեցած համայնք
17	Համայնքում ծնելիության և բազմազավակության	Առողջապահություն, Ֆիզիկական կուլտուրա	ՌՌԻ 6. Առողջ և սպորտային համայնք

	խթանումը	և սպորտ, Սոցիալական պաշտպանություն	
18	Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	ՌՌԻ 6. Առողջ և սպորտային համայնք
19	Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը	Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն	ՌՌԻ 4. Հազեցած, մրցունակ, տեղական ինքնակառավարում ունեցող համայնք
20	Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով	Ընդհանուր	Ֆոնդահայթայթում



3. Համայնքի 2024 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 4.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	232956.9	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>232956.9</b>	
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
1.	Հեղեղատարների հունների մաքրում	1 000.0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>1 000.0</b>	
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Գերեզմանատների պահպանում	-	Բոլոր բնակավայրերում
2.	Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում	11686.5	Բոլոր բնակավայրերում
3.	Ներհամայնքային ճանապարհների, փողոցների խճապատում և փոսային վերանորոգումներ	30841.0	Բոլոր բնակավայրերում
4.	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերում	171600,0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>214127.5</b>	
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
1.	Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության տրամադրման և օտարման մրցույթների, աճուրդների կազմակերպում	150.0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>150.0</b>	
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			

1	Հասանելի հանգիստ կամ համայնք՝ բոլորի համար	6435.4	Ստեփանավա ն
<b>Ընդամենը</b>		<b>6435.4</b>	
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
1.	Նախադպրոցական ներառական կրթության կազմակերպում	3000.0	Ստեփանավա ն
2.	Արտադպրոցական կրթության կազմակերպում	94803.4	Ստեփանավա ն
3.	Մասնագետների վերապատրաստումներ, ատեստավորման և տարակարգի	170.0	Ստեփանավա ն
4.	Վարչական շրջանների մանկապարտեզների շահագործում	183992.9	Բոլոր բնակավայրեր ում
<b>Ընդամենը</b>		<b>281966.3</b>	
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Մշակութային ծառայությունների մատուցում	24185.76	Ստեփանավա ն
<b>Ընդամենը</b>		<b>24185.76</b>	
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
1.	«Մանկապատանեկան մարզադպրոց» բյուջետային հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	36815.0	Ստեփանավա ն
2.	Մրցաշարերի, սպորտային հանդիպումների կազմակերպում	1700.0	Ստեփանավա ն
<b>Ընդամենը</b>		<b>38515.0</b>	
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	5000.0	Բոլոր բնակավայրեր ում
<b>Ընդամենը</b>		<b>5000.0</b>	
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	93267.9	Բոլոր բնակավայրեր ում
2.	Կանաչապատ տարածքների պահպանման, մշակման, ծառատնկման և ծառերի խնամքի աշխատանքների իրականացում	10631.5	Բոլոր բնակավայրեր ում
<b>Ընդամենը</b>		<b>103899.4</b>	
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
1.	Հանրային լսումների և քննարկումների կազմակերպում	0	Բոլոր բնակավայրեր ում

Ընդամենը	0	
Ընդհանուրը	908236.26	

**Աղյուսակ 5.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	ՏԻՄ ֆոնդիայթայթման ռազմավարություն Ստեփանավան համայնքում	3500.0	Բոլոր բնակավայրերում
2.	Ներդրումների խթանում հեռավար աշխատանքի ոլորտի համար	3000.0	Բոլոր բնակավայրերում
3.	Ստեփանավանի համայնքապետարանը հազեցած է անհրաժեշտ համակարգերով:	5000.0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>11500.0</b>	
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Բնակֆոնդի արդյունավետ կառավարման համակարգ Ստեփանավան համայնքում	1000.0	Բոլոր բնակավայրերում
2.	Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1, 3, 4 մանկապարտեզների բակերի, քաղաքի վարչական տարածքների պուրակների բարեկարգում և հիմնանորոգում:	901358.086	Բոլոր բնակավայրերում
3.	Ստեփանավան համայնքի Ռումինական բազմաբնակարան թիվ 6, 8, 12, 14, 20 շենքերի ջերմամեկուսացման և էներգոարդյունավետության արդիականացման աշխատանքներ	278711,103	Ստեփանավան
4.	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի ջրամատակարարման ցանցերի կառուցում	369318,986	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>1550388,17</b>	
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Մշակութային, մարզական ծառայությունների ընդլայնում	2000.0	Ստեփանավան
2	Ստեփանավան համայնքում ստեղծել «Զիլ» երիտասարդական կենտրոններ:	10000.0	Ստեփանավան

<b>Ընդամենը</b>		<b>12000.0</b>	
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
1	Տարեցների և բնակչության խոցելի խմբերի խնամքի և աջակցման կենտրոնների ստեղծում	5000.0	<b>Բոլոր բնակավայրերում</b>
<b>Ընդամենը</b>		<b>5000.0</b>	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1	Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացումը Ստեփանավան համայնքում	20000.0	<b>Ստեփանավան</b>
<b>Ընդամենը</b>		<b>20000.0</b>	
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
3.	Ֆուտբոլային ակումբի հիմնում	100000,0	<b>Ստեփանավան</b>
<b>Ընդամենը</b>		<b>100000,0</b>	
<b>Ընդամենը</b>		<b>1698888,17</b>	



**Աղյուսակ 6.ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ</b> Տեղական ինքնակառավարման գործունեությունը համահունչ դարձնել արդի պահանջներին, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ և թափանցիկ համակարգ::		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից (հարցումների հիման վրա), 75%</li> <li>✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 30.8%</li> </ul>			
<b>Ծրագիր 1. ՏԻՄ ֆոնդիայթայթման ռազմավարություն Ստեփանավան համայնքում</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Ապահովել ՏԻՄ-ի ֆինանսական կայունությունը՝ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման միջոցով:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Այլընտրանքային ֆինանսական ռեսուրսները ներգրավված են տարբեր կազմակերպություններից, ՀԿ-ներից, միջազգային կազմակերպություններից:	<b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմի քարտուղար	2024թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ֆոնդիայթայթման համար մշակված է մրցունակ ռազմավարություն :	Առկա է ֆոնդիայթայթման ռազմավարություն ՄԻ համայնքի համար, որտեղ ներառված են կարճաժամկետ և երկարաժամկետ գործողություններ և բազմատեսակ գործիքակազմ:	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Ֆոնդիայթայթման ռազմավարության փաստաթուղթ	Աշխատակազմի քարտուղար	2024թ. հունվար-մարտ	Ֆինանսական ռեսուրսների, մարդկային ռեսուրսների, համապատասխան միջոցներով կահավորված աշխատանքային տարածքի,

					համապատասխան մասնագետների, իմֆորմացիայի աղբյուրների բացակայությունը:
<b>Միջանկյալ արդյունք 2.</b> Ձևավորված է ֆոնդիայթայթման հմուտ թիմ:	Առկա է երկու պատրաստված մասնագետ:	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Պայմանագրեր աշխատակիցների հետ	Աշխատակզմի քարտուղար, փորձագետ	2024թ. հունվար-փետրվար	Տիմի միջոցների, համապատասխան մասնագետների, համապատասխան կահավորված աշխատանքային տարածքի բացակայություն:
<b>Միջանկյալ արդյունք 3.</b> Իրականացված է հնարավորությունների քարտեզագրում և ձևավորված է դոնորների բազա ֆոնդիայթայթման նպատակով:	-Առկա է ՀՀ ում և արտերկրում գործող առնվազն 100 դոնորներից բաղկացած բազա, որնց առաջնահերթությունների մեջ կա ՀՀ համայնքների զարգացումը:	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Բազա	Աշխատակզմի քարտուղար	2024թ. հունվար-փետրվար	Տիմի միջոցների, մարդկային ռեսուրսների, համապատասխան միջոցներով կահավորված աշխատանքային տարածքի, համապատասխան մասնագետների, իմֆորմացիայի աղբյուրների բացակայությունը:

<p><b>Միջանկյալ արդյունք 4.</b> Իրականացված է ֆոնդիայթայթման հաջողված փորձ:</p>	<p>Առնվազն երկու շահած դրամաշնորհ:</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Դրամաշնորհային պայմանագրեր</p>	<p>Աշխատակզմի քարտուղար,</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Ձախողված ֆոնդիայթայթում</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ).</b> Միջանկյալ արդյունք 1. 1.ՏԻՄ-ի ֆոնդիայթայթման ռազմավարության մշակում 2.Աշխատաժողովների կազմակերպում 3.Ռազմավարության մշակում 4.Ֆոնդիայթայթման ռազմավարության թիմի ձևավորում Միջանկյալ արդյունք 2. 1. Ներգրավել ոլորտային մասնագետներ 2. Ֆոնդիայթայթման ռազմավարության թիմի միջոցով իրականացնել ֆոնդիայթայթում Միջանկյալ արդյունք 3. 1. Քարտեզագրել հնարավոր դոնորների 2. Քարտեզագրել համայնքի նախկին բնակիչների, որոնք ապրում են արտերկրներում, 3 Ստեղծել դոնորների տվյալների շտեմարանների և ենթակառուցվածքների շերտեր Միջանկյալ արդյունք 4. 1.Մշակել ֆոնդիայթայթման նորարար գործիքակազմ 2.Ստեղծել ծագրային բանկ 3.Իրականացնել հանդիպումներ դոնոր համայնքի հետ 4.Հավաքագրել և կազմակերպել հանդիպումներ այլ ՇԿ -ների հետ</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> <b>Մուտքային ցուցանիշներ.1</b> Ռազմավարության մշակման համակարգող, փորձագետ, երկու օգնականներ, աշխատանքային տարածք, համակարգիչներ, համաժողովի կազմակերպման տարածք, ընդմիջման կազմակերպում, (կախված մասնակիցների քանակից և ֆոնդիայթայթման չափից) <b>Մուտքային ցուցանիշներ.2</b> Հմուտ երկու մասնագետներ, համապատասխան աշխատանքային տարածք, համակարգիչներ <b>Մուտքային ցուցանիշներ.3</b> Բազա ձևավորող 1 աշխատակից, համակարգիչ , ինտերնետ կապ, , աշխատանային տարածք, Օն-լայն հարթակ, ծրագրավորող <b>Մուտքային ցուցանիշներ.4</b> առնվազն 6 դոնորի հետ հանդիպում, խմբային հանդիպում ՇԿ ներքին հետ առնվազն 20 մասնակցով, ֆոնդիայթայթման նախագծերի ներկայացում <b>Նախատեսված ծախսեր` 3500.0</b> դրամ</p>			
<p><b>Ծրագիր 2. Ներդրումների խթանում հեռավար աշխատանքի ոլորտի համար</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ.</b> Ստեղծել հեռավար աշխատանքի համար</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Ստեղծված են նպաստավոր պայմաններ</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային</p>	<p>Աշխատակազմի քարտուղար աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական</p>



<p>նպաստավոր պայմաններ Ստեփանավան համայնքում բնակիչների արտագաղթը կանխելու նպատակով</p>	<p>հեռավար աշխատանքի համար</p>	<p>և տարեկան հաշվետվություններ</p>			<p>ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1. Միջանկյալ արդյունք</b> Իրականացված է հեռավար աշխատանքի ցանկություն ունեցող շահառուների հավաքագրում:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b> - Առկա է ՄԽ համայնքի հեռավար աշխատել ցանկացողների տվյալներով էլեկտրոնային բազա:</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> բազա</p>	<p>Սոց.ախատող, և համայնքապետարանի կայքը վարող մասնագետ</p>	<p>2024թ. հունվար-մարտ</p>	<p>կամավորների բացակայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b> իրականացված է հեռավար աշխատել ցանկացողների և համապատասխան դասընթացները իրականացնողների միջև կապի հաստատում</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b> Առկա են դասընթացավարների պայմանագրեր, դասընթացների ֆոտոնկարներ, նյութեր, մասնակիցների գրանցման թերթիկներ և դասընթացի մոդուլներ:</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> դասընթացավարներ և մասնակիցներ</p>	<p>աշխատակազմի քարտուղար, սոց.աշխատող</p>	<p>2024թ. հունվար-փետրվար</p>	<p>դասընթացավարների ոչ ճիշտ ընտրություն, մասնակիցների հետաքրքրվածության բացակայություն</p>

<p><b>Միջոցառումներ (գործողություններ).</b>          Միջանկյալ արդյունք 1.          1.Տալ հայտարարություն համայնքապետարանի պաշտոնական կայքում և սոց.ցանցերում          2. Վերցնել աշխատել ցանկացող մարդկանց ցանկը          3.Ձևավորել բազա հաշվի առնելով մասնագիտական կարողություններն ու ցանկությունները</p> <p>Միջանկյալ արդյունք 2.          1.Դիմել կազմակերպությունների դասընթացներ իրականացնելու համար          2.Իրականացնել դասընթացներ հեռավար աշխատանքի հմտությունների վերաբերյալ</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b>  <b>Մուտքային ցուցանիշներ.1</b> համայնքապետարանի կայքը վարող մասնագետ, հարցաթերթ, հարցումներ իրականացնելու համար մասնագետ  <b>Մուտքային ցուցանիշներ.2</b> դասընթացավարներ  <b>Նախատեսված ծախսեր 3000.0</b> դրամ</p>
---	--

**Ծրագիր 3. Ստեփանավանի համայնքապետարանը հազեցած է անհրաժեշտ համակարգերով:**

<p><b>Ծրագրի նպատակ.</b>          Ստեղծել անհրաժեշտ համակարգերով հազեցած համայնքապետարան</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>          Համայնքապետարանը հազեցած է անհրաժեշտ համակարգերով:</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b>          ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար          աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b>          Ձևավորել համապատասխան նյութաթեխնիկական բազա:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b>          Ձեռք բերված անհրաժեշտ նութատեխնիկական բազա:</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>          Համակարգիչների ձեռք բերման փաստաթղթեր, ինտերնետ կապի փոփոխության</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>03.01.24-31.03.24</p>	<p>Ձախողված մրցույթ, ֆինանսական միջոցների բացակայություն:</p>

		փաստաթղթեր:			
<b>Միջանկյալ արդյունք 2.</b> Ապահովել ՏԻՄ-ին կառավարման ոլոտի համակարգչային /էլեկտրոնային նոր ծրագրերի ներդրմամբ	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b> Նոր ծրագրիերի ներդրում, առկա ծրագրերի թարմացում, հզորացում(կարիքի դեպքում):	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Ներդրված, թարմացված ծրագրերի հզորացման փաստաթղթեր:	Աշխատակազմի քարտուղար	03.01.24-31.07.24	Ծրագրերի ոչ արդյունավետ կիրառում:
<b>Միջանկյալ արդյունք 3.</b> Զարգացնել ՏԻՄ համապատասխան աշխատակիցների կարողությունները էլեկտրոնային ծրագրերի օգտագործման հմտությունները	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b> Ունենք հմուտ, վերապատրաստված աշխատակիցներ՝ ներդրված և թարմացված ծրագրերը արդյունավետ օգտագործելու համար:	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Վերապատրաստման հավաստագրեր, համապատասխան փաստաթղթեր:	Աշխատակազմի քարտուղար	03.01.24-31.12.24	Վերապատրաստված աշխատակցի գիտելիքների ոչ տեղին կիրառում կամ ոչ օգտակար դասընթացի անցկացում :

<p><b>Միջոցառումներ (գործողություններ).</b>          Միջանկյալ արդյունք 1.          1. Կատարել ֆոնդիայթիայթում          2. Համակարգիչների ձեռք բերում          Միջանկյալ արդյունք 2.          1. Առանձնացնել այն ծրագրերը որոնք ունեն թարմացման/հզորացման կարիք           2.Ներդնել ծրագրեր որոնք կնպաստեն կառավարման արդյունավետությանը:           Միջանկյալ արդյունք 3          1.Գտնել համապատասխան վերապատրաստման դասընթացներ:           2.Ընտրել աշխատակիցներ վերապատրաստմանը մասնակցելու նպատակով:</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b>  <b>Մուտքային ցուցանիշներ.1</b> Ֆինանսական միջոցներ, համակարգիչներ, գնումները համակարգող աշխատակազմի մասնագետ  <b>Մուտքային ցուցանիշներ.2</b> Թարմացված/հզորացված ծրագրեր, ներդրված ծրագրեր  <b>Մուտքային ցուցանիշներ 3</b> համապատասխան աշխատակիցներ  <b>Նախատեսված ծախսեր` 5000,0</b> դրամ</p>
--	---

**Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում**  
**Բնակավայրերը` բոլորը**

<p><b>Ծրագրի նպատակ.</b>          Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցումը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>          1. Աշխատակազմը բնականոն գործել է, աճել է բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը` 5%-ով          2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում` 30.8 %</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b>          ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
--	---	--	--	---------------------------------	--

<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը;</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատակազմի կառուցվածքի, կանոնադրության, աշխատակարգերի և առկա կառավարման բարելավված համակարգերի առկայությունը – առկա է</li> <li>2. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը՝ 4</li> <li>3. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը՝ 45</li> <li>4. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 253 օր</li> <li>5. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում՝ 9%-ով</li> <li>6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 65%</li> <li>7. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 1-30 օր</li> </ol>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ</p>	<p>2024թ. հունվար–դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջոցառումներ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում</li> <li>2. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ</li> <li>3. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում</li> <li>4. Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում</li> </ol>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նախատեսված ծախսեր՝ 232956.9 դրամ</li> <li>2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների թիվը՝ 65,5</li> <li>3. Համայնքապետարանի վարչական շենք և գույք-առկա է</li> <li>4. Վարչական ղեկավարների նստավայրերի շենքեր և գույք</li> </ol> <p><b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջե</p>			

<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b> Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ՝ 35%-ով</li> <li>2. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում՝ 3%-ով</li> <li>3. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում՝ 3%-ով</li> <li>4. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների հավաքագրում՝ 12%</li> </ol>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի գլխավոր մասնագետ, վարչական ղեկավարներ, աշխատակազմի մասնագետներ</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջոցառումներ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</li> <li>2. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում, պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</li> </ol>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների թիվը՝ 7</li> <li>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ 1</li> <li>3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 232956,9</li> </ol>			
<p><b>Միջանկյալ արդյունք 3.</b> Բարելավվել է բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքապետարանում բնակիչների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը՝ կիրառվում է</li> <li>2. Սպասարկման կենտրոն դիմած այցելուների թիվը՝ 885</li> <li>3. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեությունից, մատուցվող ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանի</li> </ol>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ, վարչական ղեկավարներ</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների և մասնագետների առկայության անբավարարություն</p>

	<p>բարձրացում (հարցումների հիման վրա)՝ 10%-ով</p> <p>4. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում՝ 10%-ով</p> <p>5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը՝</p> <p>- համայնքի ղեկավարի կողմից՝ շաբաթական 2 օր</p> <p>- ավագանու կողմից՝ ամիսը 1 անգամ</p>				
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b></p> <p>1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում</p> <p>2. Համայնքի թափանցիկ և արդյունավետ ֆինանսական կառավարում</p> <p>3. Համայնքի գույքի կառավարման բարելավում</p> <p>4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում</p> <p>5. Աշխատակազմի աշխատակիցների և վարչական ղեկավարների աշխատանքային պայմանների բարելավում</p> <p>6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <p>1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը՝ 45</p> <p>2. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 4</p> <p>3. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ <a href="http://www.stepanavan.am/">http://www.stepanavan.am/</a>.</p>			
<p><b>Միջանկյալ արդյունք 4.</b></p> <p>Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <p>1. ՀԿՏՀ-ում օգտագործվող բաժինների թիվը՝ 11</p> <p>2. Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -1</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

	3.Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը 24				
<b>Միջոցառումներ (գործողություններ).</b> 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 3. Աշխատակազմի գույքի նորագում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցների թիվը 6			
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>					
<b>Ոլորտային նպատակ.</b> Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման մակարդակը և իրականացնել արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ:		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ.</b> ✓ Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստականության մակարդակը, 65% ✓ Տարերային աղետների հնարավոր վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման ոլորտում համայնքի բնակիչների գիտելիքների, ունակությունների և հմտությունների ավելացում (հարցումների հիման վրա) / լավ			
<b>Ծրագիր 1. Հեղեղատարների հունների մաքրում Բնակավայրերը բոլորը</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Կազմակերպել սելավատարների հունների մաքրումը և բարձրացնել սելավների հնարավոր վտանգներից բնակչության անվտանգությունը:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բարելավվել է բնակչության անվտանգության մակարդակը՝ 1-10 բալանոց սանդղակով՝ 7- ավելի շատ լավ, քան վատ	<b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարներ,	2024թ. ապրիլ- հուլիս	



<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Կազմակերպվել է սելավատարների հունների մաքրումը, բարձրացել է բնակչության անվտանգության մակարդակը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1.Սելավատարների հունների մաքրման տևողությունը՝ 4 ամիս 2. Բնակիչների կարծիքը սելավատարների հունների մաքրման վերաբերյալ՝ 1-10 բալանոց սանդղակով՝ 7- լավ 3.Սելավատարների մաքրված հունների երկարությունը՝ 3.4կմ</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարներ</p>	<p>2024թ. ապրիլ- հուլիս</p>	
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Սելավատարների հունների մաքրման ծրագրի մշակում և կառավարում 2. Սելավատարների հունների մաքրման աշխատանքների իրականացում և վերահսկում 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Նախատեսված ծախսեր՝ 1000 000 դրամ 2.Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 3 3. Համայնքի սեփական տեխնիկա և գույք – առկա է <b>Ֆինանսավորման աղբյուրը</b>՝ համայնքի բյուջե</p>			
<p><b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b></p>					
<p><b>Ոլորտային նպատակ.</b> Ապահովել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցումը:</p>		<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ.</b> Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից (հարցումների հիման վրա), %, 60%</p>			
<p><b>Ծրագիր 2. Բնակֆոնդի արդյունավետ կառավարման համակարգ Ստեփանավան համայնքում</b> <b>Բնակավայրերը բոլորը</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ.</b> Ապահովել բնակֆոնդի արդյունավետ կառավարման համակարգի ներդրումը Ստեփանավան համայնքում</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բնակչության պայմանները բարելավված են 90%-ով, բնակիչների ապրելակերպը բարելավված է 95%-ով, Ստեփանավան քաղաքում շինությունների արտաքին տեսքը բարելավված է 70%-ով , բնական ռեսուսները խնայված են 50%-ով, ճարտարապետական կոլորիտը</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին</p>	<p>2024թ. հունվար- դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

	պահպանված է 70%-ով				
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ձևավորված է ՄԽ համայնքի բնակֆոնդի համապարփակ բազա	-Առկա է ՄԽ համայնքի բնակֆոնդի 100%-ով տվյալներով էլեկտրոնային բազա	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Հաշվետվություն բազա	Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին	2024թ. հունվար-օգոստոս	մասնագետների վարձատրության համար ֆինանսական միջոցների անբավարության պատճառով մասնագետների պակաս
<b>Միջանկյալ արդյունք 2.</b> Քաղաքի Ճարտարապետական կոլորիտի վերականգնման և պահպանման համար մշակված է չափորոշիչներին համապատասխան նախագիծ:	Մշակված նախագիծ, որում նշված են համապատասխան չափանիշները՝ շենքերի արտաքին տեսքը, այգիների նույնանման լանդշաֆտային դիզայնն ու կառուցվածքը, փողոցների տեսքը, մայթերի միանման նյութաձևերը	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> նախագիծ	Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին	2024թ. օգոստոս-դեկտեմբեր	նախագիծն իրականացնում է միայն համայնքատարանի աշխատակցի կողմից առանց համապատասխան փորձագետների կամ նախագծող կազմակերպությունների, որը կարող է բերել ոչ ամբողջական մշակման
<b>Միջոցառումներ (գործողություններ).</b> Միջանկյալ արդյունք 1. 1. Իրականացնել Ստեփանավան քաղաքի ամբողջ Բնակ ֆոնդի ուսումնասիրություն, 2. Իրականացնել ԲԲՇ կառավարման մարմինների ուսումնասիրություն		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> Մուտքային ցուցանիշներ.1 Համակարգչային տեխնիկա, մեքենա, կամավորներ, նախագծող, տվյալների վերլուծող Մուտքային ցուցանիշներ.2 Տարածք, համակարգչային տեխնիկա, մեքենա նախագծողներ,			

<p>3. Իրականացնել ՄՀ-ում առկա ԲԲՇ հետ կապված իրավական խնդիրների կարգավորում</p> <p>4. Կազմակերպել աշխատաժողով</p> <p>5. Մշակել աշխատանքային պլան</p> <p>6. Կնքել համաձայնագրեր գործընկերների հետ</p> <p>7. Իրականացնել հանդիպումներ բնակիչների հետ</p> <p>8. Իրականացնել ռոնդիայթիայթում</p> <p>9. Ձևավորել հետագա կառավարման մեխանիզմ</p> <p>Միջանկյալ արդյունք 2.</p> <p>1. Իրականացնել քաղաքի ճարտարապետական կոլորիտի ուսումնասիրություն</p> <p>2. Ուսումնասիրել չափորոշիչներին համապատասխան այլ նախագծեր</p> <p>3. Մշակել նախագիծ</p> <p>4. Իրականացնել բնապահպանական անալիզներ</p> <p>5. Իրականացնել մարկետինգ</p> <p>6. ՀԿ-ների հետ իրականացնել քննարկումներ</p>	<p>ճարտարապետներ), մարկետինգի մասնագետ</p> <p><b>Նախատեսված ծախսեր՝ 1000 000 դրամ</b></p>
--	---

**Ծրագիր 3. Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1,3,4 մանկապարտեզների բակերի, քաղաքի վարչական տարածքների պուրակների բարեկարգում և հիմնանորոգում:**

<p><b>Ծրագրի նպատակ.</b> Ապահովել ԲԲՇ-երի բնակիչների և համայնքի փոքրիկների ժամանցն ու բարեկեցությունը Ստեփանավան համայնքում</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. ԲԲՇ-երի բնակիչների պայմանները բարելավված են, մնակապարտեզի փեքրիկների ժամանցն ու բարեկեցությունը ապահովված է</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
---	---	--	---	---------------------------------	--

<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b>          Ձևավորված է ՄԽ համայնքի ԲԲՇ-ների բակերի, մանկապարտեզների տարածքների, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր վարչական բնակավայրերում մեկական պարզ տիպի խաղահրապարակների կառուցման վերաբերյալ գնահատման հաշվետվություն</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b> - Առկա է ՄԽ համայնքի ԲԲՇ-ների բակերի և մանկապարտեզների տարածքների տվյալների գնահատման հաշվետվություն</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>          Հաշվետվություն</p>	<p>Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին</p>	<p>01.2024-08.2024</p>	<p>մասնագետների վարձատրության համար ֆինանսական միջոցների անբավարություն պատճառով մասնագետների պակաս</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b>          ԲԲՇ-ների բակերի հիմնանորոգման և մանկապարտեզների տարածքների բարեկարգման, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր վարչական բնակավայրերում մեկական պարզ տիպի խաղահրապարակների կառուցման համար մշակված է չափորոշիչներին համապատասխան</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).</b>          Մշակված նախագիծ, որում նշված են համապատասխան չափանիշները՝ բակերի լանդշաֆտային դիզայնն ու կառուցվածքը, մարզասարքերը</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>          նախագիծ</p>	<p>Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին</p>	<p>08.2024-11.2024</p>	<p>1. Տոնդհայթայթման ոչ ճիշտ իրականացում մասնագետների պակասի պատճառով</p>

նախագիծ:					
<p><b>Միջանկյալ արդյունք 3</b>  ԲԲՇ-ների բակերի հիմնանորոգման, մանկապարտեզների տարածքների բարեկարգման, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր վարչական բնակավայրերում մեկական պարզ տիպի խաղահրապարակների կառուցման աշխատաքներն իրականացված են</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ).  Բազմաբնակարան շենքերի բարեկարգ և կահավորված տարածքներ,</b>  բազմաբնակարան շենքերի և հարակից տարածքների երեխաների համար հարմարավետ արդիական խաղահրապարակներ, մաքուր և կանաչապատ տարածքներ:</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>  ԲԲՇ-ների բակեր և մանկապարտեզներ ի տարածքներ</p>	<p>Քաղշին բաժնի պետ</p>	<p>11.2024-</p>	<p>մասնագետների վարձատրության համար ֆինանսական միջոցների անբավարություն պատճառով մասնագետների պակաս</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ).</b>  Միջանկյալ արդյունք 1.  1. Իրականացնել բակերի ուսումնասիրություն,  2. Իրականացնել ՍՀ-ում առկա մանկապարտեզների տարածքների ուսումնասիրություն  3. Կազմակերպել աշխատաժողով  4. Մշակել աշխատանքային պլան  5. Կնքել համաձայնագրեր գործընկերների հետ  6. Իրականացնել հանդիպումներ բնակիչների հետ  7. Իրականացնել հանդիպումներ մանկապարտեզների տնօրենների</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b>  - շինարարական օբյեկտների նախագծման արժեք 6445,0  - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեք 570,0  - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեք 15070,08  - հեղինակային հսկողության ծառայությունների արժեք 5023,356  - գոյություն ունեցող շենք- շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեք/ իրականացվելու է նախագծողի կողմից, - ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեք իրականացվելու է նախագծողի կողմից</p> <p>Ընդհանուր բյուջեն 901 358 086 դրամ</p>			

<p>հետ</p> <p>Միջանկյալ արդյունք 2.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասիրել չափորոշիչներին համապատասխան լուծումներ</li> <li>2. Իրականացնել ֆոնդիայթյալում</li> <li>3. Տալ նախագծման մրցույթի հայտարարություն</li> <li>4. հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր</li> </ol> <p>Միջանկյալ արդյունք 3.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. նախագծի հիման վրա իրականացնել շինարարական աշխատանքերի իրականացման նպատակով կապալառու կազմակերպության մրցույթի հայտարարում</li> <li>2. Կապալառու կազմակերպության հետ կնքել պայմանագիր</li> <li>3. Տեխնիկական հսկողություն իրականացնելու համար մրցույթի հայտարարում</li> <li>4. Տեխնիկական հսկողություն իրականացնող համապատասխան ընկերության հետ պայմանագրի կնքում</li> <li>5. Ընտրված ԲԲՇ թաղամասերում բակային հանդիպումների միջոցով մոնիթորինգի թիմի ձևավորում</li> <li>6. Ներդնել մասնակցային մոնիթորինգի համակարգ</li> <li>7. Պայմանագրի հիման վրա հետևել հաղթող կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքներին</li> <li>8. Աշխատանքների կատարման ավարտական ակտի ընդունում</li> </ol>	<p>Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը 495746947 դրամ (55%) այդ թվում՝ Դիմակայուն Ստեփանավան 180271617 դրամ (20%)</p>
--	--

**Ծրագիր 4. Գերեզմանատների պահպանում և Բնակավայրերը բոլորը**

<p><b>Ծրագրի նպատակ.</b> Բարելավել գերեզմանատների</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Գերեզմանատան պահպանման</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b></p>	<p>Համայնքի ղեկավարի, Քաղաքաշինու</p>	<p>2024թ. հունվար-դեկտեմբեր</p>	
